



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2014 թ. սեպտեմբեր 2

N 88-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Չանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 333-Ն որոշման 2-րդ կետը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանում լրագրողների հավատարմագրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ

Մարզպետարանի տնօրինության տակ գտնվող տեղեկատվության ռեսուրսների եւ դրանց օգտագործման կարգի նկարագրություն

Մարզպետարանի տրամադրության տակ գտնվող տեղեկատվական ռեսուրսները գտնվում են տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնում, որի գործունեության նպատակն է ապահովել առկա տեղեկատվության մատչելիությունն ու հասանելիությունը հանրությանը, պետական, քաղաքական, հասարակական, այլ կազմակերպություններին: Մարզպետարանի aragatsotn.gov.am պաշտոնական կայքը հնարավորություն է ստեղծում տեղում ծանոթանալու մարզպետարանի տնօրինության տակ գտնվող տեղեկատվությանը, առցանց նամակ գրելու մարզպետարանի պաշտոնատար անձանց, հետեւելու իրենց նամակների ընթացքին եւ ստանալու պատասխան, ինչպես նաեւ՝ հարցումներ հղել:

Մարզպետարանի բոլոր ստորաբաժանումներում առկա է հեռախոսակապ, /+374 232/ 32251 ֆաքս, որոնց մասին տեղեկատվությունը տեղադրված է պաշտոնական կայքի **Մարզպետարան** բաժնի **Կառուցվածք** ենթաբաժնում եւ տեսանելի վայրում փակցված է Տեղեկատվական տախտակում, առկա են տեսապատճենահանման սարքեր, տպիչներ, ինտերնետ կապով ապահովված համակարգիչներ:

Տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնում անհրաժեշտ տեղեկատվություն է տրամադրվում մարզպետարանի պաշտոնատար անձանց դիմելու հարցման օրինակելի ձեւերի, մարզպետարանի կանոնադրության գործառույթների, կառուցվածքի, մարզի համայնքների, ենթագերատեսչական կազմակերպությունների վերաբերյալ:

Տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժինը ապահովում է „Տեղեկատվության ազատության մասին,, ՀՀ օրենքով սահմանված գործառույթների իրականացումը եւ մարզպետարանի տնօրինման տակ գտնվող տեղեկատվության մատուցումը:

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ

1. Սույն կարգը սահմանում է լրատվական գործունեություն իրականացնողի ներկայացուցիչ լրագրողի կամ լրատվական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձի (այսուհետ՝ լրագրող) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանում (այսուհետ՝ Մարզպետարան) հավատարմագրման կանոնները և հավատարմագրված լրագրողի՝ Մարզպետարանում գործունեության կազմակերպման հիմնադրույթները՝ նպատակ ունենալով ապահովել Մարզպետարանի գործունեության թափանցիկությունը և այդ գործունեության մասին անմիջական տեղեկատվություն ստանալու նպատակով լրագրողների համար ստեղծել բարենպաստ պայմաններ:

2. Լրագրողի հավատարմագրումն իրականացվում է «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և սույն կարգին համապատասխան:

Հավատարմագրված լրագրողի գործունեությունը Մարզպետարանի տարածքում կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կարգով խոսքի ազատության ապահովման՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին համապատասխան:

3. Մարզպետարանը՝

1) որևէ ձևով կամ որևէ եղանակով չի իրականացնում հավատարմագրված լրագրողի մասնագիտական գործունեության գրաքննություն.

2) հավատարմագրված բոլոր լրագրողների համար ապահովում է ոչ խտրական պայմաններ.

3) լրագրողների համար նախատեսված տեղեկատվությունը հավատարմագրված բոլոր լրագրողներին տրամադրում է միաժամանակ.

4) հավատարմագրված բոլոր լրագրողներին հնարավորինս շուտ տեղեկացնում է Մարզպետարանի այն միջոցառումների ժամանակի և անցկացման վայրի մասին, որոնք կազմակերպվում են լրագրողների համար կամ նախատեսված է լրագրողների մասնակցությունը միջոցառումներին (այսուհետ՝ Մարզպետարանի միջոցառումներ):

Տեղեկատվությունը լրագրողին փոխանցելու պատշաճ ձև է համարվում էլեկտրոնային փոստով հաղորդումը: Լրագրողի էլեկտրոնային հասցեի բացակայության դեպքում

Մարզպետարանը միջոցներ է ձեռնարկում տեղեկատվությունն այլ միջոցներով փոխանցելու համար:

4. Մարզպետարանը ոչ ուշ, քան յուրաքանչյուր 3 ամիսը մեկ անգամ հավատարմագրված լրագրողներին տրամադրում է համառոտ ամփոփագիր Մարզպետարանի գործունեության արդյունքների մասին: Դա կարող է իրականացվել ամփոփագիրը Մարզպետարանի էլեկտրոնային էջում տեղադրելու միջոցով:

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետը առնվազն յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ իր գործունեության նախընթաց արդյունքների մասին հաղորդմամբ հանդես է գալիս մամուլի ասուլիսում՝ Մարզպետարանում հավատարմագրված լրագրողների մասնակցությամբ:

5. Մարզպետարանում լրագրողների հավատարմագրման և հավատարմագրված լրագրողների գործունեության կազմակերպման համար պատասխանատու է Մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը (այսուհետ՝ Մարզպետարանի պատասխանատու ստորաբաժանում):

6. Մարզպետարանի գործունեությունը լուսաբանելու նպատակով լրագրողին (լրագրողներին) հավատարմագրելու համար լրատվական գործունեություն իրականացնողը գրավոր դիմում է ներկայացնում Մարզպետարան՝ նշելով.

1) լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրը, իսկ եթե լրատվական գործունեություն իրականացնողը ֆիզիկական անձ է՝ նրա ազգանունը, անունը, հայրանունը (եթե հայրանունը նշված է անձնագրում) և բնակության վայրը (հասցեն).

2) հավատարմագրման ներկայացվող լրագրողի, ըստ անձնագրի, ազգանունը, անունը, հայրանունը (եթե հայրանունը նշված է անձնագրում).

3) լրագրողի ներկայացրած լրատվության միջոցի (լրատվության միջոցների) անվանումը (անվանումները).

4) լրատվական գործունեություն իրականացնողի և լրագրողի էլեկտրոնային հասցեները, հեռախոսահամարներն ու հեռապատճենների համարները (եթե այդպիսիք առկա են):

7. Մարզպետարանը վարում է լրագրողների հավատարմագրման մատյան:

Լրագրողին (լրագրողներին) հավատարմագրելու համար լրատվական գործունեության իրականացնողի դիմումն ստացվելուց հետո, այն անմիջապես գրանցվում է լրագրողների հավատարմագրման մատյանում, որտեղ նշվում են դրա ստացման օրը և սույն կարգի 6-րդ կետով նախատեսված՝ դիմումում մատնանշված տեղեկությունները: Մատյանի համապատասխան սյունակներում գրանցվում են լրագրողին հավատարմագրելու կամ հավատարմագրումը մերժելու մասին գրառումը, դրա մասին լրատվական գործունեություն իրականացնողին գրություն ուղարկելու օրը, հավատարմագրման վերջնաժամկետը,

հավատարմագրման դադարեցման մասին նշումը, հավատարմագրման դադարեցման հիմնավորումը (համառոտ) և այլ տեղեկություններ:

8. Հավատարմագրումն իրականացվում է մեկ տարի ժամկետով, իսկ լրատվական գործունեություն իրականացնողի դիմումում ավելի պակաս ժամկետ մատնանշվելու դեպքում՝ տվյալ ժամկետով:

9. Հավատարմագրման ենթակա են յուրաքանչյուր լրատվության միջոցը ներկայացնող ոչ ավելի, քան 2 լրագրող և 2 լուսանկարիչ կամ տեսաձայնագրման 2 օպերատոր:

10. Մարզպետարանը սույն կարգի 6-րդ կետում նշված դիմումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում լրագրողին հավատարմագրելու կամ նրա հավատարմագրումը մերժելու մասին գրառում է կատարում լրագրողների հավատարմագրման մատյանում և դրա մասին գրություն է ուղարկում լրատվական գործունեություն իրականացնողին:

11. Լրագրողի հավատարմագրումը մերժվում է, եթե սույն կարգի 6-րդ կետում նշված դիմումը չի բովանդակում սահմանված տեղեկությունները կամ խախտվում է սույն կարգի 9-րդ կետի պահանջը կամ առկա է լրագրողի հավատարմագրումը դադարեցնելու՝ սույն կարգի 13-րդ կետի «1)», «2)» կամ «3)» ենթակետերում նշված հիմքերից որևէ մեկը:

12. Հավատարմագրված լրագրողների ցուցակը հանձնվում է Մարզպետարանի անցագրային կետ (կետեր): Ցուցակում փոփոխությունները և լրացումները կատարվում են լրագրողների հավատարմագրման մատյանում կատարված գրառումներին համապատասխան՝ այդ գրառումները կատարվելուց անմիջապես հետո:

13. Մարզպետարանը լրագրողի հավատարմագրումը կարող է դադարեցնել, եթե՝

1) նա անգործունակ կամ սահմանափակ գործունակ է ճանաչվել դատական կարգով.

2) դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ.

3) նա տարածել է Մարզպետարանի գործունեության մասին այնպիսի տեղեկություններ, որոնք չեն համապատասխանել իրականությանը, ինչը հաստատվել է դատարանի վճռով.

4) հավատարմագրումը դադարեցնելու մասին դիմել է նրան հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողը.

5) դադարել է գործել լրագրողին հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողը, և դադարեցվել է լրագրողի ներկայացրած լրատվության բոլոր միջոցների տարածումը:

Լրագրողի հավատարմագրման դադարեցումն իրականացվում է լրագրողների հավատարմագրման մատյանում համապատասխան գրառում կատարելու միջոցով:

Մարզպետարանի պատասխանատու ստորաբաժանումը լրագրողի հավատարմագրման դադարեցման մասին մեկօրյա ժամկետում գրությամբ հայտնում է լրագրողին հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողին:

14. Օտարերկրյա պետության օրենսդրության հիման վրա գործող լրատվական գործունեությունն իրականացնողի ներկայացուցիչ լրագրողի հավատարմագրման համար սույն կարգի 6-րդ կետով նախատեսված դիմումին կից պետք է ներկայացվի նաև Հայաստանի Հանրապետությունում լրագրողի հավատարմագրման՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից տրված վկայականի լուսապատճենը, իսկ բնօրինակը ներկայացնում է լրագրողը:

Օտարերկրյա պետության օրենսդրության հիման վրա գործող լրատվական գործունեությունն իրականացնողի ներկայացուցիչ լրագրողի հավատարմագրման դադարեցման հիմք է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում նրա հավատարմագրման դադարեցումը:

Օտարերկրյա պետության օրենսդրության հիման վրա գործող լրատվական գործունեությունն իրականացնողի ներկայացուցիչ լրագրողի՝ Մարզպետարանում հավատարմագրման համար Հայաստանի Հանրապետության հավատարմագրումը չի պահանջվում, եթե Հայաստանի Հանրապետության տարածքում սահմանված կարգով գործում է տվյալ լրատվական գործունեությունն իրականացնողի առանձնացված ստորաբաժանումը, որի միջոցով առաջադրվել է լրագրողի հավատարմագրման խնդիրը:

15. Հավատարմագրված լրագրողն իրավունք ունի՝

- 1) ստանալու լրատվության միջոցների համար նախատեսված տեղեկատվությունը.
- 2) նախապես տեղեկացված լինելու Մարզպետարանի միջոցառումների անցկացման մասին և ծանոթանալու առկա տեղեկատու նյութերին.
- 3) մասնակցելու Մարզպետարանի միջոցառումներին.
- 4) հավատարմագրված այլ լրագրողների հետ համահավասար օգտվելու հավատարմագրված լրագրողների համար ստեղծված պայմաններից.
- 5) Մարզպետարանում հավատարմագրված լինելու հանգամանքից անկախ՝ տեղեկատվության ազատության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դիմելու և ստանալու իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը:

16. Մարզպետարանի պատասխանատու ստորաբաժանումը լրագրողի մասնագիտական գործունեությանն օժանդակելու նպատակով, լրագրողի միջնորդությամբ, կազմակերպում է այցելություններ Մարզպետարանի ստորաբաժանումներ և հանդիպումներ Մարզպետարանի պաշտոնատար անձանց հետ:

17. Մարզպետարանի միջոցառումներին կարող են մասնակցել կամ ներկա գտնվել յուրաքանչյուր լրատվության միջոցը ներկայացնող մեկ լրագրող և մեկ լուսանկարիչ կամ տեսաձայնագրման մեկ օպերատոր, եթե Մարզպետարանի պատասխանատու ստորաբաժանման հետ ձեռք չի բերված այլ պայմանավորվածություն և, եթե ավելի մեծ թվով լրագրողների, լուսանկարիչների ու օպերատորների մասնակցությունը չի սահմանափակի հավատարմագրված այլ լրագրողների մասնակցության հնարավորությունը:

18. Մարզպետարանի միջոցառումներից դուրս լրագրողի այցելությունը Մարզպետարան համաձայնեցվում է Մարզպետարանի պատասխանատու ստորաբաժանման հետ: Այդ դեպքում (ինչպես նաև միջոցառումների ժամանակ) լրագրողը Մարզպետարան է այցելում սույն կարգի 12-րդ կետում նշված ցուցակի և անձը հաստատող փաստաթղթի հիման վրա՝ առանց Մարզպետարանի տարածք մուտքի անցագրի:

19. Մարզպետարանի պատասխանատու ստորաբաժանման՝ Մարզպետարանի տարածքում հավատարմագրված լրագրողի աշխատանքի կազմակերպմանն ուղղված ցուցումները պարտադիր են հավատարմագրված լրագրողի համար:

20. Հավատարմագրված լրագրողներին տեղավորելու համար, Մարզպետարանի շենքային հնարավորությունների սահմանափակ լինելու դեպքում, Մարզպետարանը, ելնելով իր գործունեության թափանցիկությունն ապահովելու և այդ գործունեության մասին հանրությանն առավել մեծ ծավալով և լիարժեք տեղեկատվություն տալու նկատառումներից, կարող է սահմանել լրագրողների հավատարմագրման հստակ, բանական և արդարացի քվոտաներ՝ ըստ լրատվության միջոցի տեսակի, տարածման տարածքի, մամուլի տպաքանակի, բովանդակային գերակա ուղղվածության և լրատվության միջոցի այլ բնութագրերի: Այդ դեպքում լրագրողների հավատարմագրումն իրականացվում է՝ առաջնությունը տալով ըստ այդ քվոտաների պահանջվող հատկանիշներն առավել չափով բավարարող լրատվության միջոցները ներկայացնող լրագրողներին:

**ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար**



Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ